ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

N «ՀԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/03» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ «14» մարտի 2022թ. ժամը 10:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Բաբայան

Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Ղազարյան, Գ. Ավետիսյան, Ն. Սարգսյան, Հ. Մինասյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մնացականյան

1. **Տեղեկություն՝ «ՀԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/03» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման օրվա և ժամի մասին**

1.1 հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում հրապարակվելու օրվանից հաշված 8-րդ օրը (11.03.2022թ.) ժամը 10:00-ին,

1.2 հայտերը բացվել են էլեկտրոնային համակարգի միջոցով,

1.3 էլեկտրոնային հակադարձ աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող օրը՝ 14.03.2022թ. ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

2. **Տեղեկատվություն գնման հայտերով սահմանված՝ գնվելիք ապրանքների գների վերաբերյալ**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտերով սահմանված սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գները՝ մեկ - թվով արտահայտված.

Չափաբաժնի համարը	Գնվելիք ապրանքի անվանումը	Գնման հայտով սահմանված գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)
1	Veritas Backup Exec Ծրագրային ապահովման, Symantec Vip Business թվային բանալիների և SonicWall NSA 4650 սարքի	5 630 000

	(արտոնագրերի ժամկետների երկարաձգման փաթեթ)	
2	Kaspersky Endpoint Security հակավիրուսային ծրագրային ապահովում	1 160 000

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

3. <u>Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և տվյալները</u>

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար «ՀԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/03» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

N	Մասնակիցների անվանումը	Գտնվելու վայրը և կապի միջոցները
1.	«Իքս-Արթ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Սարյան 4-55 Հեռ. +374 60 27-27-51 Էլ.փոստ՝ contact@x-art.am
2.	«ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Աբելյան 6/1, B601 տարածք Հեռ. +374 91 009 610 Էլ.փոստ՝ info@technoforum.am

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

4. <u>Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ</u>

Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

5. <u>Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ ստացված հարցումների և տրամադրված պատասխանների մասին</u>

Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, հետևաբար պատասխաններ չեն տրամադրվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

6. «ՀԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/03» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները՝

Չափաբաժին 1: Veritas Backup Exec Ծրագրային ապահովման, Symantec Vip Business թվային բանալիների և SonicWall NSA 4650 սարքի (արտոնագրերի ժամկետների երկարաձգման փաթեթ)

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/		
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
1	«Իքս-Արթ» ՍՊԸ	4673232	20 %	5607878.4	4673232	20 %	5607878.40

Էլեկտրոնային հակադարձ աճուրդը ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 14.03.2022թ. և Համակարգի կողմից 1-ին չափաբաժնով առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ընտրվել «Իքս-Արթ» ՍՊԸ-ն:

Չափաբաժին 2: Kaspersky Endpoint Security հակավիրուսային ծրագրային ապահովում

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/		
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
1	«ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊԸ	761750	20 %	914100	761750	20 %	914100.00

Էլեկտրոնային հակադարձ աճուրդը ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 14.03.2022թ. և Համակարգի կողմից 2-րդ չափաբաժնով առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ընտրվել «ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

7. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի /դիմում-հայտարարության/ առկայության մասին

«Իքս-Արթ» ՍՊԸ-ի և «ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) և իրական շահառուների մասին հայտարարագիրը (Հավելված 1.2):

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

8. Տվյալներ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխանության մասին

«Իքս-Արթ» ՍՊԸ-ի և «ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա է էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1), իրական շահառուների մասին հայտարարագիրը (Հավելված 1.2) և Համակարգում մուտքագրած (լրացրած) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

9. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց «Իքս-Արթ» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից 1-ին չափաբաժնի մասով և 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊԸ-ին:
2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն անգործության ժամկետ չի կիրառվում:
3. Պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակիցներին ուղարկել Պայմանագրի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում կնքվելիք պայմանագրի 10 (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ ներկայացրած գնային առաջարկի 15 (տասնհինգ) տոկոսի չափով, ինչպես նաև ստորագրել և ուղարկել պայմանագիրը, որը ներկայացնելուց հետո սահմանված կարգով այն կկնքվի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Վ. Բաբայան

Անդամներ՝ _____ Գ. Ղազարյան

_____ Գ. Ավետիսյան

_____ Ն. Սարգսյան

_____ Հ. Մինասյան

Քարտուղար՝ _____ Ա. Մնացականյան